02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

21 (1420) • 7 հունիսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Միավորված կոլեգիայի նիստ Երևանում

Երեւանում կայանալիք Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության Միավորված կոլեգիայի նիստին մասնակցելու համար հունիսի 3-ին Հայաստան ժամանեց Ռուսաստանի Դաշնության ՆԳՆ պատվիրակությունը՝ ՌԴ ՆԳ նախարար Վլադիմիր Կոլոկոլցեւի գլխավորությամբ:

Օդանավակայանում պատվիրակությանը դիմավորեցին ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը եւ կոլեգիայի անդամները:

Միավորված կոլեգիայի նիստին բացման խոսքով հանդես եկան Վալերիյ Օսիպյանն ու Վլադիմիր Կոլոկոլցեւը:

Նիստին մասնակցում էին Միավորված կոլեգիայի անդամներ, երկու գերատեսչությունների կենտրոնական ապարատների վարչությունների պետեր, այլ բարձրաստիճան ներկայացուցիչներ, ինչպես եւ ԱՊՀ մասնակից պետությունների տարածքում կազմակերպված հանցավորության եւ այլ վտանգավոր հանցատեսակների դեմ պայքարի համակարգող բյուրոյի տնօրեն Օլեգ Կոնովալովը:

Օրակարգում ընդգրկված «Թմրամիջոցների անօրինական շրջանառության հակազդման ոլորտում ՌԴ ներքին գործերի նախարարության եւ ՀՀ ոստիկանության փոխգործակցության արդյունավետության բարձրացման մասին» հարցի շուրջ զեկույցներով հանդես եկան ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության պետ Արսեն Այվազյանը եւ ՌԴ ՆԳՆ թմրամիջոցների շրջանառության վերահսկողության գլխավոր վարչության պետ Անդրեյ Խրապովը:

Տեղեկատվության փոխանակման ոլորտում Ռուսաստանի Դաշնության ՆԳ նախարարության եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության համագործակցության վիճակի վերաբերյալ զեկույցներով հանդես եկան «ՌԴ ՆԳՆ գլխավոր տեղեկատվական-վերլուծական կենտրոն» դաշնային պետական հաստատության պետի պաշտոնակատար Վլադիմիր Ագեեւը եւ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պետ Արթուր Անտոնյանը:

Միավորված կոլեգիայի աշխատանքային պլանը ներկայացրեց ՀՀ ոստիկանության շտաբի պետ Արմեն Ղուկասյանը:

Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության Միավորված կոլեգիայի նիստի ավարտին ամփոփիչ ելույթներ ունեցան ՌԴ ՆԳ նախարար Վլադիմիր Կոլոկոլցեւն ու ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:

Միավորված կոլեգիայի նիստում քննարկված բոլոր հարցերի վերաբերյալ ընդունվեցին որոշումներ եւ ստորագրվեցին ամփոփիչ փաստաթղթեր:

Համագործակցության հեռանկարներ

Մայիսի 31-ին Ուզբեկստանի Հանրապետության Տաշքենդ քաղաքում կայացավ ԱՊՀ մասնակից պետությունների ներքին գործերի նախարարների խորհրդի հերթական նիստը, որին մասնակցում էր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի գլխավորած պատվիրակությունը:

Նիստի ընթացքում քննարկվեցին օպերատիվ-հետախուզական գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր, այդ թվում՝ ԱՊՀ մասնակից-պետությունների ներքին գործերի/ոստիկանության մարմինների հարցումներով միջազգային վերահսկվող մատակարարումների կազմակերպման եւ անցկացման միասնական կարգը եւ ԱՊՀ մասնակից պետությունների ներքին գործերի նախարարությունների/ոստիկանության կողմից համալիր համակարգված եւ/կամ համատեղ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների անցկացման կանոնակարգը:

էջ 2

Ոստիկանները բացահայտեցին սպանությունը

Մայիսի 30-ին ոստիկանության Մասիսի բաժին ահազանգ ստացվեց: Արարատի մարզի Նորամարգ գյուղ մեկնած «շտապօգնության» խումբը հայտնում էր, որ գյուղի տներից մեկում վնասվածքներ ստացած անձինք կան: Ահազանգին արագ արձագանքած ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Մասիսի բաժնի օպերատիվ խմբերը տեղում պարզեցին, որ այդ անձինք վնասվածքները ստացել են պայթյունի հետեւանքով: Բեկորային բազմաթիվ վնասվածքներով 60-ամյա տանտերը, նրա 44-ամյա կինը, նրանց 20-ամյա հարսն ու 1-ամյա թոռը տեղափոխվեցին Երեւան՝ «Էրեբունի» բժշկական կենտրոն: 60-ամյա տղամարդը հիվանդանոցում մահացավ:

Դեպքի վայր հրավիրվեցին ոստիկանության փորձաքրեագիտական վարչության պայթյունատեխնիկական, ճգաբանական ու սառը զենքի հետազոտությունների գծով մասնագետներ, որոնք մանրակրկիտ ուսումնասիրելով դեպքի վայրը՝ պարզեցին, որ հիվանդանոց տեղափոխված անձինք վնասվածքները ստացել էին նռնակների պայթյունների հետեւանքով:

էջ 2

Գողություններ եւ ավազակություն

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները օպերատիվ տվյալներ էին ստացել, որ Աշտարակի բնակիչ 24-ամյա երեք երիտասարդներ հանցավոր խումբ են ստեղծել եւ գողություններ են անում: Նրանք վերցվեցին օպերատիվ տեսադաշտ:

Պարզվեց, որ երիտասարդները մարտ ամսին մտել են Ծաղկաձորի առանձնատներից մեկն ու հրացաններ հափշտակել: Ծաղկաձորի մեկ այլ առանձնատնից էլ գողություն էին արել հունիսի լույս 2-ի գիշերը, իսկ կեսօրին եւս մեկ հանցագործություն էին ծրագրել:

Խոսքը Չեխիայի քաղաքացու նկատմամբ Աջափնյակում կատարված ավազակային հարձակման մասին է:

էջ 3

Սպանության մեղադրանքով

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները, իրականացնելով օպերատիվ միջոցառումներ, հունիսի 4-ին հայտնաբերեցին 59-ամյա ՌԴ քաղաքացու, որը 2014 թվականից Ռուսաստանի իրավապահների կողմից հետախուզվում էր սպանության մեղադրանքով: Հարուցված քրեական գործի շրջանակներում հիմնավորվել էր, որ նա Կրասնոդար քաղաքում սպանել էր նախկին կնոջն ու հափշտակել նրա ոսկյա զարդերը:

Ոստիկանության ծառայողները տեղեկություններ ստանալով, որ հետախուզվողը գտնվում է Հայաստանում, ձեռնարկեցին օպերատիվ միջոցառումներ՝ պարզելու նրա թաքնվելու հնարավոր վայրերը, եւ հունիսի 4-ին էլ նրան հայտնաբերեցին Կոտայքի մարզի Արզնի գյուղում:

Հետախուզվողի հայտնաբերման տեղեկությունը փոխանցվել է հետախուզումը նախաձեռնած մարմնին:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով առկա վճարովի ուսուցման՝ 2019/2020 ուստարվա ընդունելություն

Շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության բակալավրի աստիճան եւ տրվում պետական նմուշի դիպլոմ: Ուսման տեւողությունը 4 տարի է:

Ընդունելության կարգին եւ պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

Վնհարմար հարմարավետություն

Դարմարավետ աշխատանքային պայմաններ ապահովելու խնդիրը լուծեց կեղծելով արձանագրություն ու փաստաթուղթ:

էջ 3

Փախուստ օվկիանոսից այն կողմ

Մեկ դիակ, մեկ վիրավոր ու մեկ վթարված մեքենա. դա հայտնաբերեցին ահազանգով ժամանած ոստիկանները:

էջ 6

«Քնակարանային» ծրագրի տապալումը

Վերջին դատվածությունից 15 տարի անց խաբեությամբ գումար ձեռք գցելու միտքը նորից գլուխ բարձրացրեց:

էջ 7

Համագործակցության հեռանկարներ

Սկիզբը՝ էջ 1

Նիստում քննարկվեց եւ համաձայնություն տրվեց «Մինչեւ 2030 թվականի համար ԱՊՀ մասնակից պետությունների ներքին գործերի նախարարությունների՝ ոստիկանության համագործակցության հայեցակարգին»:

Հանցավորության դեմ պայքարի ոլորտում հետագա համագործակցության առաջնային հարցերի շուրջ ելույթով հանդես եկավ ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը: Նա ներկայացրեց ՀՀ ոստիկանությունում ընթացող բարեփոխումները, ինչպես եւ ԱՊՀ ներքին գործերի՝ ոստիկանության մարմինների համագործակցության ընթացքում առկա առաջնահերթ խնդիրները եւ դրանց լուծման հնարավոր ուղիները:

Վալերիյ Օսիպյանը մասնավորապես նշեց, որ առանցքային ձեռքբերում է հանրապետությունում համակարգային կոռուպցիայի վերացումը, իսկ առանձին կոռուպցիոն դրսեւորումները կանխվում են, մեղավորները պատժվում են օրենքի ողջ խստությամբ: Ոստիկանության նվաճումներից է նաեւ հասարակություն-ոստիկանություն կապի ամրապնդումը: Ամեն ինչ արվում է հատկապես հանրային ծառայություններ մատուցող ստորաբաժանումների աշխատանքի եւ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պաշտպանության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Այդ առումով կարեւորվեց առաջիկայում ներդրվելիք պարեկային ծառայության գործունեությունը:

Անդրադառնալով ԱՊՀ մասնակից պետությունների ներքին գործերի եւ ոստիկանության մարմինների համագործակցության ամրապնդման խնդիրներին՝ Վալերիյ Օսիպյանն առանձնացրեց կիբեռհանցավորության, մարդկանց առեւտրի, անօրինական միգրացիայի, զենքի եւ թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի ոլորտները եւ դրական գնահատեց փոխգործակցության արդյունքները հետախուզվող անձանց հայտնաբերման բնագավառում:

Օրակարգի հարցերով ընդունվեցին համապատասխան որոշումներ:

ԱՊՀ մասնակից պետությունների ներքին գործերի նախարարների Խորհրդի հերթական նիստը կկայանա 2020 թվականին, Երեւանում:

ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանին եւ ԱՊՀ մասնակից պետությունների ներքին գործերի նախարարներին ընդունեց Ուզբեկստանի Հանրապետության նախագահ Շաքկատ Միրզիյոեւը:

Զենք-զինամթերքի հանձնում

Ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողները շարունակում են ամենօրյա հետեւողական միջոցառումները՝ ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման ուղղությամբ: Բացատրական աշխատանքը միշտ էլ արդյունք տալիս է:

Ոստիկանության Անիի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ մայիսի 29-ին բաժին եկած Շիրակի մարզի Ձիթհանքով գյուղում ապրող 34-ամյա մի տղամարդ ներկայացրեց ակոսավոր հրազեն: Նրա հայտնածով՝ հրազենը պատկանել էր Արցախյան ազատամարտի մասնակից հանգուցյալ հորը: Տղամարդն այն գտել էր անասնագոմի տանիքում:

Ոստիկանության Ամասիայի բաժնի պարեկայինների բացատրական աշխատանքի շնորհիվ մայիսի 30-ին բաժին ներկայացավ Ամասիա գյուղի մի բնակիչ ու ոստիկաններին հանձնեց ապօրինի պահվող ինքնաշեն ատրճանակ ու ինքնաձիգի փամփուշտներ: Տղամարդու հայտնածով՝ զենք-զինամթերքը պատկանել էր տարիներ առաջ մահացած հորեղբորը, որոնք բերել էր Արցախից՝ ազատամարտի տարիներին:

Մայիսի 31-ին ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման դեպք արձանագրվեց ոստիկանության Թալինի բաժնում: Արագածոտնի մարզի Պարտիզակ գյուղի 70-ամյա մի բնակիչ ներկայացրեց նռնակներ, նռնակի պայթուցիչներ, տարբեր տրամաչափի փամփուշտներ: Նրա հայտնածով՝ զենք-զինամթերքը գտել էր անասնագոմի տանիքը նորոգելիս: Ըստ նրա՝ դրանք պատկանել են ամիսներ առաջ մահացած եղբորը, որը մասնակցել էր Արցախյան ազատամարտին:

Ոստիկանություն հանձնված զենք-զինամթերքն ուղարկվել է դատաձգաբանական փորձաքննության:

Ապօրինի զենք-զինամթերք ունեցողներին կրկին հորդորում ենք կամավոր հանձնել ոստիկանություն՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Յուրացման դեպք է արձանագրվել

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա, Սյունիքի մարզային վարչության եւ Սիսիանի բաժնի քրեական հետախույզների համատեղ միջոցառումների արդյունքում, խոշոր չափերի յուրացման կամ վատնման առերեւույթ հանցագործության դեպք է արձանագրվել:

Չեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում իրավապահները պարզել են, որ «Սիսիան» բժշկական կենտրոնի նախկին երկու տնօրենները, ըստ քննությամբ ձեռք բերված նախնական տվյալների, բուժհաստատության չորս աշխատողների անվամբ դուրս են գրել աշխատավարձի դրույքաչափից ավելի՝ խոշոր չափերի գումար, որը վատնման եղանակով հափշտակվել է:

Առերեւույթ հանցագործության դեպքի առթիվ քրեական օրենսգրքի՝ յուրացնելը կամ վատնելը հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Չեռնարկվում են միջոցառումներ դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Ոստիկանության բացահայտումը

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման եւ Շիրակի մարզային վարչությունների ու Կումայրիի բաժնի ծառայողների համատեղ միջոցառումներով բացահայտվել է կոռուպցիոն բնույթի դեպք:

Պարզվել է, որ մարտի 11-ից Գյումրու համայնքապետարանի անշարժ գույքի կառավարման բաժնի պետի պաշտոնը զբաղեցնող անձը հայտնաբերել է ապօրինի շինարարություն: Ըստ քննությանը այս պահին հայտնի տվյալների՝ նա քաղաքացուց պահանջել եւ Գյումրու համայնքապետարանի աշխատակցի օժանդակությամբ մարտի 24-ին ստացել է 200 դոլար կաշառք: Այդպիսով, քաղաքացու օգտին ակնհայտ ապօրինի անգործություն է դրսեւորել՝ չարձանագրելով իրավախախտումը:

Առերեւույթ հանցագործության դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ, որն ուղարկվել է քննչական մարմին՝ նախաքննության:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Օթար ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Կյանքից հեռացավ ոստիկանության պաշտոնաթող փոխգնդապետ Օթար Համբարձումյանը:

Ծնվել է 1948 թ., Արմավիրի մարզի Շենավան գյուղում:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո սովորել է Երեւանի Էլեկտրամեխանիկական տեխնիկումում: 1972-1992 թթ. ծառայել է Զինված ուժերում: Զորացրվելուց հետո ծառայության է անցել ներքին գործերի համակարգում:

Միլիցիոներ, տեսուչ, օպերլիազոր, ավագ տեսուչ, բաժանմունքի պետ. որտեղ էլ աշխատել է, իրեն դրսեւորել է որպես բարեխիղճ, օրինակելի, սկզբունքային ծառայող:

Ծառայությանը զուգահեռ սովորել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում:

1992-1994 թթ. եւ 1997-1998 թթ. եղել է ՀՀ նախագահի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձանց պահպանության ծառայության պետի օգնական, անձնակազմի գծով, այնուհետեւ՝ օպերատիվ գծով տեղակալ:

Բարեխիղճ ծառայության համար արժանացել է ղեկավարության խրախուսանքներին ու գործընկերների հարգանքին:

Թոշակի է անցել 1999 թվականին:

Լավ մարդու, սպայի, վստահելի գործընկերոջ հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների սրտերում:

Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ

Սպանություն Նորամարգում

Սկիզբը՝ էջ 1

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանության ծառայողները պարզեցին, որ հիվանդանոց տեղափոխված 44-ամյա կնոջ նախկին ամուսինը վիճել էր նրա ու նրա ներկայիս ամուսնու հետ: Վեճի ընթացքում էլ երկու նռնակ էր նետել նրանց ուղղությամբ եւ հեռացել:

Ոստիկանները պարզեցին հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը եւ տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեցին 59-ամյա տղամարդուն հայտնաբերելու ուղղությամբ:

Դարուցված քրեական գործի շրջանակներում ոստիկանության Մասիսի բաժնի եւ տարածքային նախաքննական մարմնի ծառայողները դեպքից ժամեր անց խուզարկություն կատարեցին հանցագործությունը կատարելու կասկածանքով որոնվող տղամարդու բնակության հասցեում: Դայտնաբերվեցին վառոդանման զանգվածով պոլիէթիլենային տոպրակ, պայթուցիչներով նռնակներ, որոնցից մեկի վրա թափանցիկ ժապավենով ամրացված էին պայթուցիկ զանգված, իսկ մյուսի վրա՝ հրազենի գնդակներ:

Կատարվում է նախաքննություն:

Մ. Ա.

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Անհարմար հարմարավետություն

Քրեական օրենսգրքի 314 հոդվածը պատիժ է նախատեսում պաշտոնեական կեղծիքի համար. սահմանված պատիժն էլ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով տուգանքն է կամ առավելագույնը չորս տարի ժամկետով ազատազրկումը՝ կախված այն բանից, թե պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով պաշտոնական փաստաթղթերում կեղծ տեղեկություններ նշելը, գրառումներ, փոփոխություններ կատարելը ինչ հետեւանք է առաջացրել:

Լոռու մարզի քննչական բաժնի կողմից պաշտոնեական կեղծիքի մեղադրանք է առաջադրվել գյուղապետ Վարդեւան Ասլանյանի նկատմամբ:

Ի՞նչ կեղծիք է արել գյուղապետը. առաջին հայացքից թվում է՝ ծանր հետեւանքներով կեղծիք չէ. մարդը ցանկացել է, որ իր աշխատասենյակը հավուր պատշաճի կահավորված լինի: Բայց քանի որ համայնքին հատկացված բյուջեում նման ծախսեր չէին նախատեսված, ավելին՝ նույնիսկ առաջին անհրաժեշտության որոշ խնդիրների լուծման ծախսեր չէին ներառվել, գյուղապետը լավ կահավորված աշխատասենյակ ունենալու ցանկությունն իրականություն էր դարձրել կեղծիքի ճանապարհով:

Ֆոնդային բյուջեի ծախսային մասում համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխություններն անպայման պետք է հաստատի համայնքի ավագանին: Գյուղապետը գիտեր, որ ավագանին չի հաստատի աշխատասենյակի համար կահույք գնելու առաջարկը, ուստի իր համար հարմարավետ աշխատանքային պայմաններ ապահովելու խնդիրը լուծեց ինքնուրույն՝ կեղծելով ստորագրություններ, արձանագրություն ու փաստաթուղթ:

Հասավ նպատակին: Հարմարավետ պայմաններում, ինչ խոսք, հաճելի է աշխատել, բայց եթե բազում չլուծված խնդիրներ կան, ու քո հարմարավետությունը մյուսների աչքն է ծակում, ուրեմն արարքդ կարող է շատերի դժգոհությունն առաջացնել:

Այդպես էլ եղավ: Գյուղապետի գործերի մասին իմացան նաեւ ոստիկանությունում: Նրա նկատմամբ քրեական գործ հարուցվեց:

Նախաքննությամբ հիմնավորվեց, որ Վարդեւան Ասլանյանը կազմել է համայնքի ավագանու կեղծ որոշում, ըստ որի՝ շենք-շինությունների նորոգման համար նախատեսված ութ հարյուր հազար դրամի մասով իբր ավագանին փոփոխություն է կատարել՝ գումարը տեղափոխելով գրասենյակային կահույք գնելու հոդվածի տակ: Որոշումն իր ձեռքով կազմել էր, իր ձեռքով ստորագրել, բնականաբար՝ կեղծելով ավագանու անդամների ստորագրությունը: Որոշումը մարզպետարան չի էլ ներկայացրել, այլ ուղիղ հանձնել է ֆինանսների նախարարության Լոռու գանձապետական բաժին: Հատկացված ութ հարյուր հազար դրամով գնել էր գրասենյակային կահույք եւ հարմարավետ դարձրել իր աշխատասենյակը՝ լուծելով գյուղի «թիվ մեկ խնդիրը», իսկ արդյունքում կանգնել մեկ այլ խնդրի առաջ:

Փաստով հարուցված քրեական գործի նախաքննությունն ավարտվել է: Գործը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատարան:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Գողություններ եւ ավազակություն

Սկիզբը՝ էջ 1

Հունիսի 2-ին երիտասարդները 29-ամյա զբոսաշրջիկին հանդիպել են Երեւան-Աշտարակ ճանապարհին ու խաբեությամբ նստեցրել մեքենան՝ իբր քաղաք հասցնելու նպատակով: Ընթացքում շեղվել են ճանապարհից ու դանակի սպառնալիքով հափշտակել նրա ուսապարկը, որի մեջ եղել են լուսանկարչական սարք, բջջային հեռախոս եւ այլ իրեր: Տուժած աղջիկը հենց դեպքի օրը դիմել է ոստիկանություն:

Քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները, համագործակցելով ոստիկանության տարածքային մի շարք ստորաբաժանումների աշխատակիցների հետ, երիտասարդներին հայտնաբերեցին Աշտարակի Բագավան թաղամասում եւ կասկածանքով բերման ենթարկեցին ոստիկանության Մաշտոցի բաժին:

Նրանցից մեկի խուզարկությամբ հայտնաբերվեց ավազակությամբ հափշտակված բջջային հեռախոսը: Հարուցված քրեական գործի շրջանակներում խուզարկություններ կատարվեցին նրանց բնակարաններում եւ հայտնաբերվեցին Ծաղկաձորի առանձնատներից հափշտակված հրացաններն ու հեռադիտակը:

Հարուցվել է քրեական գործ:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Միջադեպ դանակով եւ մահակով

Օրերս հիվանդանոցից ահազանգ ստացվեց ոստիկանության Մասիսի բաժին, որ բուժօգնության են տեղափոխվել Արարատի մարզի Մարմարաշեն գյուղի երեք բնակիչներ: Ախտորոշվել էին տարբեր վնասվածքներ, այդ թվում՝ գանգուղեղային: Տղամարդկանցից մեկի մարմնին նաեւ ծակած-կտրած վնասվածք կար: Տղամարդիկ բժիշկներին հայտնել էին, որ վնասվածքները ստացել են ավտովթարի հետեւանքով:

Հիվանդանոց մեկնած ոստիկանության Մասիսի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ միջոցառումների արդյունքում նախ պարզեցին, որ հիվանդանոց տեղափոխված անձինք ստել են: Վնասվածքները ոչ թե ավտովթարի հետեւանք էին, այլ վեճ-ծեծկռտուքի, որի ընթացքում գործածվել էին նաեւ սուր-կտրող-ծակող առարկա եւ մահակ:

Քրեական հետախույզները շուտով հայտնաբերեցին դեպքի վայրը: Միջադեպը կատարվել էր Մասիսի Արարատյան փողոցում, որտեղ հայտնաբերվեցին մասնակիցներից մեկի «Ժիգուլի»-ն, արնանման հետքեր, արնանման հետքերով դանակ:

Դեպքի վայրը մանրակրկիտ զննվեց, փորձաքննությունների համար վերցվեցին հետքեր, դանակը առգրավվեց, մեքենան էլ տեղափոխվեց բաժնի հատուկ պահպանվող տարածք: Դեպքի վայրից փոքր-ինչ հեռու հայտնաբերվեց եւս մեկ մեքենա, որը միջադեպի մասնակիցներից մեկինն է: Այն եւս տեղափոխվեց ոստիկանության Մասիսի բաժնի հատուկ պահպանվող տարածք:

Քրեական հետախույզները շուտով պարզեցին միջադեպի բոլոր մասնակիցների ինքնությունը, ինչպես եւ դեպքի մի շարք հանգամանքներ:

Նախնական տվյալներով՝ հիվանդանոց տեղափոխված եղբայրներին մարմնական վնասվածքները պատճառել էին հորեղբոր որդիները: Բացատրական աշխատանքների շնորհիվ նրանք ներկայացան ոստիկանության Մասիսի բաժին:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

www.police.am

Բացահայտվեց 10 տարի անց

2009 թ. դեկտեմբերի 8-ին Մարալիկ քաղաքի ավտոպահեստամասերի խանութ-կրպակից պահեստամասեր էին գողացել: Ոստիկանները տարաբնույթ միջոցառումներ էին ձեռնարկել, սակայն հանցագործին հայտնաբերել չէր հաջողվել: Միջոցառումները շարունակվեցին, եւ տասը տարի անց գողությունը բացահայտվեց:

Ոստիկանության Անիի բաժնի ծառայողների օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ գողությունը կատարել է Երեւանի բնակիչ Զոհրաբ Գ.-ն եւ վաճառել ավտոպահեստամասերի վաճառքով զբաղվող խանութների:

Զոհրաբ Գ.-ն հրավիրվել է ոստիկանություն եւ տվել է խոստովանական ցուցմունք:

Նախաքննությունը շարունակվում է:

Դանակահարություն Այգեստանում

Մայիսի 30-ին հիվանդանոցից ոստիկանության Կենտրոնական բաժին հաղորդում էր ստացվել, որ կտրած-ծակած վերքով բուժօգնության են դիմել երեք երիտասարդներ:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ երիտասարդներին մարմնական վնասվածքներ պատճառել է 18-ամյա մի տղա՝ Այգեստան 10-րդ փողոցում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ: Ոստիկանների բացատրական աշխատանքների շնորհիվ կասկածյալը ներկայացավ ոստիկանության Կենտրոնական բաժին եւ տվեց խոստովանական բացատրություն:

Կատարվում է նախաքննություն:

Գիշերային շրջայցն արդյունավետ էր

Հունիսի 2-ի գիշերը ոստիկանության ՊՊԾ գնդի ծառայողները Գայի պողոտայի եւ Ն. Ստեփանյան փողոցի խաչմերուկից ոստիկանության Նոր Նորքի բաժին բերման ենթարկեցին 25-ամյա մի երիտասարդի: Նա խոստովանեց, որ փորձել է գողություն անել վճարային տերմինալից:

Պարզվեց, որ մինչ այդ երիտասարդը փորձել էր քարով կոտրել մի գրասենյակի պատուհանի ապակին ու գողություն անել, սակայն ապակին չէր կոտրվել:

Նախապատրաստվում են նյութեր:

Դանակահարել էր անչափահասին

Մայիսի 29-ի լուսադեմին ոստիկանության Կոտայքի բաժնում հիվանդանոցից հաղորդում ստացվեց, որ կրծքավանդակի թափանցող-կտրած վերքով բուժօգնության է դիմել Երեւանի 17-ամյա մի բնակիչ: Նրա մայրը հայտնել էր, որ որդուն դանակահարել են Արզնու ձորում:

Մեկնած ոստիկաններին փուժողը հայտնեց, որ մայիսի 28-ին, ժամը 23.30-ի սահմաններում, մոր եւ քրոջ հետ Արզնու ձորում քայլելիս իրեն անծանոթ անձը հայհոյանքներ է հնչեցրել: Արդյունքում՝ վիճաբանություն է ծագել, որի ժամանակ իրեն դանակով խփել են:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում, սակայն, պարզվեց, որ պատանուն մարմնական վնասվածքը պատճառել են Երեւան քաղաքի «Թումոյի» այգում:

Ձեռնարկված միջոցառումներով քրեական հետախույզները պարզեցին, որ մարմնական վնասվածքը պատճառել է 19-ամյա Անուշավան Հ.-ն: Բացատրական աշխատանքների շնորհիվ նա ինքնակամ ներկայացավ ոստիկանության Մաշտոցի բաժին, ապա ներկայացվեց քննչական բաժին:

Կատարվում է նախաքննություն:

Զենք-զինամթերքի հայտնաբերում

Ոստիկանության Ախուրյանի բաժնի անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքում օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ Գյումրիի մի բնակչի տանը ապօրինի զենք-զինամթերք է պահվում:

Հունիսի 1-ին ոստիկանության Ախուրյանի եւ Կումայրիի բաժինների ծառայողները, դատարանի որոշմամբ, խուզարկեցին 33-ամյա տղամարդու տունն ու օժանդակ շինությունները: Հայտնաբերվեցին «Մակարով» ատրճանակ, գործարանային համարով «Կալաշնիկովի» ինքնաձիգ, նռնակներ, նռնակի պայթուցիչ, ինքնաձիգի եւ ատրճանակի փամփշտատուփեր, տարբեր տրամաչափի փամփուշտներ ու այլ ռազմամթերք:

Նշանակվել են դատաքննական ու պայթյունատեխնիկական փորձաքննություններ: Ոստիկանության Ախուրյանի բաժնի ծառայողները պարզում են զենք-զինամթերքի ձեռքբերման աղբյուրը:

Կատարվում է հետաքննություն:

Մ. Ս.

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հարեւանները

Տավուշի մարզի Դաղարծին գյուղում հարեւանությամբ ապրող Սահակյանների եւ Կարապետյանների ընտանիքները իրար հետ երբեւէ խնդիրներ չէին ունեցել: Լավ հարեւաններ էին՝ հասնող, օգնող, կարեկցող: Մարտի 20-ին, սակայն, ինչ-որ խնդիրներ ծագեցին, որոնք կարող էին լուծել փոխադարձ համաձայնությամբ, իրար հասկանալով, բայց նախընտրեցին վեճը: Մեկի որդին եւ մյուսի թոռնուհին սովորում էին նույն դասարանում: Այդ օրը Արսենը նեղացրել էր դասընկերուհուն. քաշել էր՝ Վարդուհու մազերից: Տանը աղջիկը դժգոհեց Արսենից ու պատմեց եղելությունը: Վարդուհու պապը՝ Մուշեղը, զայրացավ եւ շտապեց հարեւանի տուն: Մուշեղը պահանջեց, որ Կարենը կարգի հրավիրի որդուն: Ի զարմանս Մուշեղի՝ Կարենը պաշտպանեց Արսենին: Վեճը դարձավ անխուսափելի, որի ընթացքում Մուշեղը գլխով խփեց Կարենի գլխին, իսկ երբ Կարենի կինը փորձեց միջամտել, խփեց նաեւ նրան:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Դիլիջանի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում հարեւանները բացատրություններ տվեցին: Մուշեղ Կարապետյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 118 հոդվածով նախատեսված հանցարարք:

Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Չճանաչելու հերեւանքը

Տավուշի մարզի Հովք գյուղի բնակիչ Արմեն Գասպարյանին մեքենայի պահեստամասեր էին պետք: Հեռու չգնաց, որոշեց դիմել համագյուղացուն՝ Ալբերտին, որը զբաղվում էր պահեստամասերի վաճառքով: Զանգեց ու ներկայացավ, բայց Ալբերտը նրան անմիջապես չճանաչեց ու հարցերով փորձեց «տեղը բերել», ինչից Արմենը վիրավորվեց: Չստացված հեռախոսազրույցը տհաճ ընթացք ունեցավ: Ալբերտի կողքին գտնվող հորաքրոջ տղան՝ Մանվելը, զայրացավ, որ Արմենը իր քեռորդու հետ նման տոնով է խոսում: Մի խոսքով, որոշեցին հանդիպել Արմենին ու պարզաբանել:

Մանվելի զայրույթը չէր մեղմվում, ինչն ակնառ էր նաեւ Արմենի հետ հանդիպման ընթացքում: Կողմերը իրար չհասկացան, վիճեցին: Թեժ խոսակցության ընթացքում էլ Մանվելը խփեց Արմենին: «Հանդիպումն» այսքանով ավարտվեց:

Կատարվածի վերաբերյալ ոստիկանության Դիլիջանի բաժնում նյութեր նախապատրաստվեցին: Նշանակվեց նաեւ դատաբժշկական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ Արմենին պառճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով:

Դիմողը, սակայն, բողոքը չպնդեց, եւ քրեական գործի հարուցումը մերժվեց:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մանկան հրեշասակներ
կամ սերիական կին մարդասպաններ

Սա հիպոթեզ չէ, հորինվածք չէ, երազ չէ: Փաստ է: Բարեբախտաբար՝ աշխարհում համեմատաբար քիչ հանդիպող, բայց՝ իրական փաստ: Կանանց շրջանում եւս հանդիպում են մարդասպաններ, որոնք մարդկանց ուղարկում են «այն աշխարհ»: Նկատի չունենք նրանց, ովքեր սպանություն են կատարում խանդի, վիրավորանքի, գիտակցության մթագնման կամ ինքնապաշտպանության անելանելի վիճակում: Խոսելու ենք նրանց մասին, ովքեր իրենց տղամարդ հանցընկերների պես «սնվում» են սպանություններով, ովքեր սպանելու մեծ փորձ ունեն եւ փնտրում են նոր սպանություններ: Օրինակ՝ եգիպտուհի բուժքույր Ամրա Նու էլ-Դինը տարիների ընթացքում սպանել էր տասնութ հիվանդի: Բոլորին թունավորել էր դեղերով, որ գողացել էր հիվանդանոցի դեղատնից: Հետագայում իր արարքը բացատրել էր նրանով՝ իբր չէր ցանկացել, որ հիվանդներն իրենց տնքոցներով խանգարեն իրեն հերթապահելու ընթացքում:

90-ական թվականների սկզբներին կին սերիական մարդասպանների խնդիրը սկսեց անհանգստացնել հասարակությանը եւ ոլորտի մասնագետներին:

Շատ մասնագետներ, որոնք զբաղվում են սերիական մարդասպանների հետազոտություններով, կարծում են, որ «փնտրեք կնոջը» սկզբունքը առանձնապես չի աշխատի: Նախ՝ կանայք հազվադեպ են դառնում մարդասպան, հետո՝ նրանց ֆիզիոլոգիական բնույթը որոշակիորեն բացառում է վայրագությունը: Կանայք մարդասպան են դառնում հանգամանքների բերումով: Եվ հիմնականում մեկ անգամ են սպանություն կատարում: Որոշ մասնագետներ կարծում են, որ կին սերիական մարդասպաններ եղել են եւ կլինեն, պարզապես համեմատաբար քիչ են, եւ նրանց հայտնաբերելը բավական բարդ է:

Կին սերիական մարդասպանները գործում են բավական երկար, երբեմն՝ տասնյակ տարիներով: Նրանք հայտնաբերվում են դեպքի վայրում կամ էլ մահից հետո են բացահայտվում: Դաստիարակչական աշխատանքները եւ հոգեբանական թրեյնինգները նրանց չեն օգնում:

Արեւմտյան մասնագետներից մեկը ուսումնասիրելով ավելի քան երեսուն սպանություն՝ եզրակացրել է՝ տղամարդ սերիական մարդասպաններին հատուկ է երեւակայությունը, հետապնդումը, առեւանգումը, սպանությունը, դիակի հետ «աշխատելը»:

Տղամարդիկ հազվադեպ են զույգով գործում: Կանանց դեպքում այլ է: Օրինակ՝ երկու համասեռամոլ բուժքույրեր աշխատում էին ծերանոցում: Նրանց զոհերը մահամերձ տարեցներ էին: Ինչպես հետագայում բացատրել են բուժքույրերը՝ հոգեբանորեն դա նրանց համար սպանություն չի եղել: Չէ՞ որ այդ տարեցները, վաղ թե ուշ, մահանալու էին:

Բուժքույրերը սովորաբար խեղդամահ էին անում իրենց զոհերին կամ թունավորում: Չէին սիրում տանջամահ անել. խեղդում էին, իսկ հետագայում ախտորոշվում էր սրտի կաթված: Նրանց խղճին հինգ սպանություն կար: Երկրորդ սպանությունից հետո նրանցից մեկը նախկին ամուսնուն հայտում է իրենց գաղտնիքը: Ամուսինը կարծում է, թե համասեռամոլության հողի վրա կինը վերջնականապես խանգարվել է: Մեկ տարի անց տեղեկանում է, որ կնոջ ասածն իրականություն էր:

Որոշ հոգեբաններ այս կանանց արարքը որակեցին որպես ադրենալին ստանալու աղբյուր:

Տղամարդ սերիական մարդասպանները, որպես կանոն, չեն սպանում ծանոթներին, հարազատներին: Խուսափում են պոտենցիալ զոհերի հետ զգացմունքային շփումներից: Այդ պատճառով էլ չեն ցավում զոհերի համար: Կին սերիական մարդասպանները զոհերին ընտրում են իրենց միջավայրից, ընտանեկան շրջապատից կամ գործընկերներից: Նրանք ավելի շատ գործում են աշխատավայրում:

Բուժքույր Ջենեթ Ջոնսը, որն աշխատում էր Սան Անտոնիոյի հիվանդանոցի ինտենսիվ թերապիայի մանկական բաժանմունքում, ստացել էր «Քույր մահ» մականունը: Վեց ամսում, նրա հերթապահության ընթացքում, գրանցվել էր տասը երեխայի մահ: Ներքին հետաքննությունը ոչ մի արդյունք չտվեց:

Շարունակելի

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Դնարամիտ տատիկը

Ոստիկանություն է զանգել 77-ամյա մի կին եւ հայտնել, որ իր տունը թալանել են:

Մեկնած ոստիկաններին կինը հայտնել է, որ ոչ մի թալան էլ չի եղել: Նաեւ արարքն այսպես է բացատրել. ինքն այդ տանը չի ապրում արդեն քսան տարի, ցանկացել է նման կերպ ստիպել ոստիկանությանը, որ հսկողություն իրականացվի չբնակեցված տան վրա:

Բջջային սեռագարություն

Կեսգիշերին ոստիկանություն է զանգել հանրապետության հյուսիսային հեռավոր գյուղի մի բնակչուհի եւ հայտնել, որ հանրապետության հարավային կողմի գյուղերից մի տղամարդ զանգել է իրեն, շանտաժ է անում, սպառնում, թե լուսանկարներ կտեղադրի սոցցանցում:

Պարզվել է, որ տեսաձայնային ինտերնետային կապով տղամարդը հեռախոսազրույց է ունեցել մերկ կնոջ հետ, տեսագրել նրան, իսկ հաջորդ օրը հեռախոսազրույցի ընթացքում սպառնացել է՝ եթե իր հետ սեռական հարաբերություն չունենա՝ տեսագրածը կհրապարակի սոցիալական ցանցերում:

Տղամարդը բերման է ենթարկվել, տվել ինքնախոստովանական բացատրություն եւ բաց թողնվել:

Առանց լուսապակի

Մի եկեղեցու մոմավաճառ հաղորդում է տվել, որ անծանոթ մի տղա մտել է եկեղեցի, մոտեցել մոմավաճառի սենյակին, գոռգոռացել, անպատվել ու վիրավորել է իրեն՝ մեղադրելով եկեղեցում՝ «Աստծո տանը», առեւտրով զբաղվելու համար, ձեռքերով խփել ու կոտրել է սենյակի ապակիները:

Մեկնած ոստիկանները պարզել են նոր մեսիայի ինքնությունը, նրան հրավիրել բաժին, որտեղ նա տվել է ինքնախոստովանական բացատրություն եւ բաց թողնվել: Գնա խաղաղությամբ...

Ավտոպահեստամասերի պես

Սովորաբար գողանում են թանկարժեք մեքենաների թանկարժեք պահեստամասեր՝ կողային հայելիներ, լուսարձակներ եւ այլն: Իսկ ոստիկանությունում ստացված հաղորդումը քիչ այլ բնույթի էր: Մի գյուղաբնակ հայտնում էր, որ իր ծիու վրայից գողացել են դնչկալը, պարանը, թամբը, դոշակալը, պոչակալը, թամբի ամրացման երկու գոտի եւ սանձը:

Հղի՝ անկանխատեսելի հետեւանքով

22-ամյա մի կին զանգել եւ հայտնել է, որ ինքը հղի է, հարեւանների հետ վիճաբանության ժամանակ իրեն խփել են:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ վիճաբանության ժամանակ 18-ամյա հարեւանուհին բռնել է նրա մազերից եւ բռունցքով խփել փորին, իսկ հարեւանուհու մայրը փայտով հարվածներ է հասցրել նրա ձեռքին՝ պատճառելով վնասվածք:

Իրավապահները պարզում են, թե միջադեպի հետ ինչ կապ ունի հղիությունը:

Ամուսնու նախկին կինը

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ «ուշագնացություն՝ գլխին հարվածից հետո» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել 20-ամյա մի կին:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ 20-ամյա կնոջ ամուսնու նախկին՝ 33-ամյա կինն է քաշել նրա հագուստից եւ խփել պատին, հետո քարերով հարվածներ տեղացել:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ մայիսի 30-ից հունիսի 6-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 30 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 1-ը՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման, 2-ը՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 5-ը՝ գողության, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 1-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու,1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 6 հետախուզվող:

Արձանագրվել է 95 ճանապարհատրանսպորտային պատահար. 2 մարդ զոհվել է, 132-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 19 դեպք. մարդ զոհվել է, իսկ 18-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Հունիսի 2-ին Երեւանի Արտաշատի խճուղում իրար են բախվել «ՎԱԶ-21120» եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները եւ «Ֆոլքսվագեն»-ի երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 3-ին Երեւանի Սայաթ-Նովայի պողոտայում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 62-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 3-ին Երեւանի Մաշտոցի պողոտայի եւ Ամիրյան փողոցի խաչմերուկում իրար են բախվել «Օպել» մակնիշի ավտոմեքենան եւ մոպեդը. 41-ամյա մոպեդավարը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 3-ին Երեւանի Չորափի փողոցում «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենան բախվել է «Օպել» մակնիշի ավտոմեքենային. «Ֆոլքսվագեն»-ի 41-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 3-ին Աշտարակ-Գյումրի ճանապարհի 2-րդ կմ-ին իրար են բախվել «Մերսեդես» եւ «ՎԱԶ-21101» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-21101»-ի 26-ամյա վարորդը, երեք ուղեւորները եւ «Մերսեդես»-ի երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 3-ին Սեւան-Երեւան ճանապարհի 28-րդ կմ-ին իրար են բախվել «ԶԻԼ» եւ «Միցուբիշի Պաջերո» մակնիշի ավտոմեքենաներ. «ԶԻԼ»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 3-ին Կոտայքի մարզի Քանաքեռավան գյուղում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան բախվել է «Մոսկվիչ» մակնիշի ավտոմեքենային. «Մոսկվիչ»-ի 3-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 3-ին Երեւանի Թեւոսյան փողոցում իրար են բախվել «Հունդաի» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ի 59-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 3-ին Երեւանի Գայի պողոտայի եւ Բաղյան փողոցի խաչմերուկում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 65-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 3-ին Երեւանի Մյասնիկյան պողոտայում իրար են բախվել «Դոջ» եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենաներ. «Դոջ»-ի 27-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 4-ին Երեւանի Մայիսի 9-ի եւ Մանանդյան փողոցների խաչմերուկում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 56-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 4-ին Երեւանի Այվազովսկու փողոցում «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 23-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 4-ին Վանաձոր-Դիլիջան ճանապարհի 25-րդ կմ-ին իրար են բախվել «Օպել Վեկտրա», «ԳԱԶ-24» եւ «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենաներ. «ԲՄՎ»-ի 49-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 4-ին Վայոց ձորի Ռինդ գյուղում «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 5-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հայկական միլիցիայի կազմավորման պատմությունից

Սկիզբը՝ նախորդ համարում

Երեւանում եւ Ալեքսանդրապոլում հաճախակի էին դարձել անկանոն հրաձգությունները: Բնակչության ձեռքին կար մեծ քանակությամբ զենք եւ զինամթերք, որոնք պարբերաբար օգտագործվում էին հատկապես երեկոյան, երբ հերթական գինարբուքից հետո ոմանք ցանկանում էին ազդարարել իրենց քեֆերի մասին: Նույնիսկ արգելվում էր սազանդարներին՝ երաժիշտներին, մասնակցել նման «խնջույքների». հնարավոր է ենթարկվեին վարչական պատասխանատվության: Զենք պահելու համար պահանջվում էր հատուկ արտոնագիր, իսկ արտոնագիր ունեցողները իրավունք չունեին հրազենը կրելու: 1918 թ. օգոստոսի դրությամբ, ըստ ՆԳ նախարարության օպերատիվ-հետախուզական տվյալների, քաղաքացիական բնակչության մոտ կար 60 հազարից 150 հազար մարտական հրազեն:

1919 թ. մարտի սկզբներին հայկական դիվիզիայի հրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանը ՆԳ նախարարին տեղեկացնում է մարտական գործողություններին Նախիջեւանի միլիցիայի մասնակցության մասին. «Պարտք եմ համարում յայտնել Ձեզ Նախիջեւանի միլիցիայի փայլուն ռազմական գործողութեան մասին, Ղարալարի (այժմ՝ Արալեզ) եւ միլիցիայի պետ Նժդեհի հերոսութեան մասին»:

1919 թ. հուլիսի 8-ին արդարադատության նախարարությունը կառավարությանը ներկայացնում է «Դատաստանական դասընթացների» կանոնադրությունը, որը նախատեսում էր դասընթացներում ընդգրկել 20 միլիցիոների: Միաժամանակ նախատեսվում էր Հայաստանի 14 գավառներում կազմակերպել միլիցիոներական 8-ամսյա դասընթացներ:

Սեպտեմբերի 2-ին Կիլիկիայից ժամանած ֆրանսիական բանակի սպա, ռազմական ժանդարմական ստորաբաժանման լեյտենանտ Ռուբեն Պապիկյանը ՆԳ նախարարի հաստատմանն է ներկայացնում միլիցիայի ժամանակավոր կանոնադրությունը: Ռուբեն Պապիկյանը 1919 թ. սեպտեմբերի 11-ից նշանակվել էր Երեւանի միլիցիայի պետ:

1919 թ. դեկտեմբերի 4-ին Երեւանի միլիցիայի դպրոցի ղեկավար եւ դասատու է նշանակվում Զոհրապ Բագրեւանդյանը: Նա կազմում է աշխատակիցների հաստիքացուցակը եւ դասացուցակը: Ցավոք, ընդհարումներ ունենալով ՆԳ նախարարության վարչության եւ միլիցիայի բաժնի տեսուչ Տրդատ Տրդատյանի հետ՝ 1920 թ. փետրվարի 26-ին Բագրեւանդյանը հրաժարական է տալիս:

1920 թ. հունվարի 28-ին ՆԳ նախարար Աբրահամ Գյուլխանդանյանը կառավարությանն առաջարկում է կազմակերպել «100-հոգիանոց հրամկազմ ունեցող միլիցիա»: Հանրապետությունը, սակայն, չհաստատեց ընդունել սահմանադրություն, ուստի կառավարությունը 1920 թ. ապրիլին նախընտրում է գործածության մեջ դնել 1917 թ. ապրիլի 17-ին Ռուսաստանի ժամանակավոր կառավարության «Միլիցիայի մասին» ժամանակավոր օրենքը:

ՀՅ-ում կարեւորվում էր դատաիրավական մարմինների կայացումը, սակայն ստեղծված իրադրության մեջ կառավարությունը հարկադրված էր ժամանակավորապես պահպանել Ռուսական կայսրությունում գործած եւ ժամանակավոր կառավարության ընդունած օրենքները, իհարկե, որոշ փոփոխություններով: Նույնը վերաբերում էր միլիցիային: Քննարկման է ներկայացվում «Միլիցիայի ժամանակավոր օրենքը»: Կատարվում են որոշ փոփոխություններ:

«Միլիցիայի մասին» օրենքում կան վիճահարույց հոդվածներ, սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը չհաստատեց ընդունել սահմանադրություն, ուստի ստիպված էր առաջնորդվել ժամանակավոր կառավարության ընդունած օրենքներով, որոնք Հայաստանում ստեղծված իրավիճակի պատճառով այնքան էլ չէին համապատասխանում առկա իրադրությանը: Այնուամենայնիվ, «Միլիցիայի մասին» օրենքը կարեւոր է նրանով, որ կարողանում էր սահմանել եւ կանոնավորել իրավապահ մարմնի աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր
Ռոստոմ ՍԱՐԳՍՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի պրոֆեսոր, ոստիկանության գնդապետ

Վամպիկայի մոլագարները

Սկիզբը՝ նախորդ համարում

Վիսկոնսին նահանգում մահապատիժը վերացված էր, ուստի դատարանը Ձեֆրի Դամերին տասնհինգ հանցադրվագով դատապարտեց 1070 տարվա բանտարկության: Նրան տեղավորեցին Վիսկոնսինի խիստ ռեժիմի բանտի մենախցում, որտեղ մնաց մինչեւ 1994 թվականի նոյեմբերի 18-ը: Այդ օրը բանտի զուգարանում վեճի բռնվեց կալանավոր Քրիստոֆեր Սքարվերի հետ, որը խոզանակով խփեց Դամերի գլխին եւ սպանեց: Նույնիսկ մարդակերի մահվանից հետո բանտ նամակներ էին գալիս սիրահարված կանանցից:

Նման մի բան էլ կատարվել է ամերիկյան մեկ այլ մոլագարի՝ Ռիչարդ Ռամիրեսի դեպքում, որը 90-ականների սկզբին 13 մարդ էր սպանել Լոս Անջելեսում: Արյունոտ հանցագործությունների համար մարդիկ նրան Սատանա ու Գիշերային Ստալքեր էին կոչել: Երբ վերջապես հայտնվեց արդարադատության ձեռքում, դատարանը նրան դատապարտեց մահապատժի: Սակայն դատավճիռն ի կատար ածելը հետաձգվեց մի քանի տարով: Սան Քվենտինի բանտում Ռամիրեսին սկսեց նամակներ ուղարկել 15-ամյա Քելլի Քեմփբելը: Շուտով նրանք ընկերացան նամակագրության միջոցով: Ռամիրեսը աղջկանից պահանջում էր ուղարկել մերկ լուսանկարները եւ հարցուփորձ էր անում նրա սեռական կյանքի մանրամասների մասին: Այդուհանդերձ, աղջիկը չընդհատեց նամակագրությունը. հույս ուներ, որ, ի վերջո, կբուժի մոլագարի հիվանդ ներաշխարհը: Նույնիսկ ցանկանում էր նրան այցելել բանտում ու ափսոսանք էր հայտնում, որ դեռ տասնութ տարեկան չկա:

Ամերիկայում բացահայտվեց եւս մեկ

Ռիչարդ Ռամիրես

առանձնապես վտանգավոր մոլագար՝ Ջոել Ռիֆկինը: Այդ 33-ամյա երիտասարդը գազանություններ էր անում Նյու Յորքում, հարձակվում էր միայնակ կանանց, հիմնականում՝ մարմնավաճառների վրա: Հանցագործության սխեման պարզունակ էր. սեռական կապից հետո խեղդում էր զոհին, մարմինը կամ գցում էր գետը, կամ թաղում պարապուտում: Նրա կուռքը Արթուր Շաուքրոսն էր՝ Ռոչեսթերից, որը 1989-1990 թվականներին 11 կին էր սպանել: Ռիֆկինը թերթերից կտրում էր այդ մոլագարի դատավարության ակնարկներն ու զետեղում համապատասխան ալբոմում: Նա երազում էր «խփել» Արթուրի ռեկորդը, ինչն, ի վերջո, հաջողվեց. Ռիֆկինը սպանեց 18 երիտասարդ կանանց:

Ռիֆկինը հոգեբանական խնդիրներ ունեցել էր մանկուց: Երեք ամսական էր, երբ նրան որդեգրեց մի երիտասարդ զույգ: Թե ովքեր են եղել ապագա մոլագարի իսկական ծնողները, այդպես էլ չպարզվեց: Դպրոցում Ռիֆկինն անմարդամոտ էր ու դանդաղաշարժության համար ստացավ Կրիա մականունը: Միակ մարդը, որ հասկանում էր տղային, խորթ հայրն էր: Երբ լրացավ Ջոելի քսանութ տարին, հայտնի դարձավ, որ հայրը տառապում է քաղցկեղով, եւ նա ինքնասպանություն գործեց: Դրանից երկու տարի անց Ռիֆկինը բռնեց հանցավորության ուղին:

Նրան պատահմամբ բռնեցին: Հերթական սպանությունից հետո զոհի դիակը բարձել էր իր պիկապը, որ դուրս բերի Նյու Յորքից: Քաղաքային այգու մոտ նրա մեքենան կանգնեցրին ոստիկաններն ու բեռնախցում հայտնաբերեցին 23-ամյա կնոջ մարմինը, որն անհայտ կորել էր օրեր առաջ: Ջոել Ռիֆկինը դիմադրություն ցույց չտվեց...

Ամերիկյան մոլագարների մասին վերջին տեղեկություններից հարկ է առանձնացնել վամպիր Ջոն Քրաբչլիի գործը: 1989 թվականին նա Ֆլորիդայում հարձակվել էր 19-ամյա մի աղջկա վրա, կապկպել էր, տարել իր մոտ ու ենթարկել խոշտանգումների՝ օգտագործելով վիրաբուժական գործիքների հատուկ հավաքածու: Խոշտանգումը մի ամբողջ օր էր տեւել: Հետո աղջկան թողել էր լոգարանում ու հեռացել: Բայց զոհը կարողացել էր հավաքել ուժերը, բացել լողասենյակի պատուհանն ու հասնել ոստիկանություն:

Ջոն Քրաբչլիի դատավարությունը հասարակական մեծ հնչողություն ստացավ. նման մոտ քսան սպանություն վաղուց ալեկոծում էր Ֆլորիդան: Թվում էր՝ մոլագարը վերջապես բացահայտված է, սակայն նրա մեղավորությունն այդպես էլ չապացուցվեց: Քրաբչլին դատապարտվեց 25 տարվա բանտարկության, նստեց 10 տարի եւ օրինակելի վարքի համար 1996 թ. օգոստոսի 8-ին ազատ արձակվեց:

ՓԱԽՈՒՍՏ ՕՎԿԻԱՆՈՍԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

1998 թվականի հունիսի 29-ի ուշ երեկոյան Հրազդանի կիրճում երեքով էին հայտնվել՝ Վահան Սահակյանը, Հրայր Հակոբյանն ու Խաչիկ Արշակյանը:

Վահան Սահակյանը իր «Մոսկվիչ»-ով էր, մյուս երկուսը՝ «ԳԱԶ-24»-ով:

Ո՛ւմ մեղքն էր ավելի մեծ, որ մեքենաները բախվեցին: Հենց այդ հարցի շուրջ էլ սկսում են վիճել: Գոռում, հայհոյում, քաշքշում են իրար: Հետո բնության անդորրը խախտվում է նաեւ կրակոցներով: Վահան Սահակյանը հանում է ապօրինի պահվող ատրճանակն ու կրակում Խաչիկի ու Հրայրի ուղղությամբ:

Մեկ դիակ, մեկ արնաքամվող վիրավոր ու մեկ վթարված մեքենա. այս է հայտնաբերում ահազանգով դեպքի վայր մեկնած ոստիկանության օպերատիվ խումբը:

Սպանվածը Խաչիկ Արշակյանն էր: Բժիշկներին հաջողվում է փրկել հիվանդանոց տեղափոխված Հրայր Հակոբյանի կյանքը:

Քրեական հետախույզներն անմիջապես ձեռնամուխ են լինում հանցագործության բացահայտման աշխատանքներին:

Հարուցվում է քրեական գործ: Նշանակվում են դատաբժշկական, քրեաբանական ու դատաձգաբանական փորձաքննություններ: Քննությամբ պարզվում են դեպքի հանգամանքները:

Քրեական գործով որոշումներ են կայացվում Վահան Սահակյանին նախկին քրեական օրենսգրքի 99 հոդվածի 4-րդ կետի (սպանություն) եւ 232 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու եւ հետախուզում հայտարարելու մասին:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրեր անց հայտնաբերվում է նաեւ վթարված մյուս մեքենան՝ Վահան Սահակյանի «Մոսկվիչ»-ը:

Վահան Սահակյանին հայտնաբերելու ուղղությամբ միջոցառումները արդյունք չեն տալիս, եւ քրեական վարույթը կասեցվում է:

Հանցագործին հայտնաբերելու ուղղությամբ միջոցառումները, սակայն, չեն դադարում, նրան պատասխանատվության ենթարկելու հարցը մնում է օրակարգում:

Վահան Սահակյանն արդեն հայտնվել էր օվկիանոսի մյուս ափին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Խաղա՞ղ էր, հանգի՞ստ, մտածում էր՝ վերջ, այլեւս բռնվելու վտանգն անցե՞լ է... Եթե այդպես էր, ուրեմն՝ չարաչար սխալվում էր:

Վահան Սահակյանը Աջափնյակ թաղամասի բնակիչ էր, ուստի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին եւ 235 հոդվածի 1-ին մասին համապատասխանեցրած քրեական գործը տեղափոխվում է ոստիկանության Մաշտոցի բաժին:

Ակտիվ համագործակցություն է ծավալվում ոստիկանության Մաշտոցի բաժնի, Հայաստանում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի եւ քրեական հետախուզության գլխավոր վարչության միջեւ:

Վահան Սահակյանի վերաբերյալ առաջին տեղեկությունները ստացվեցին չորս տարի անց: Նա թաքնվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Մեկ տարի անց հայտնաբերվեց Նյու Յորքում, բայց Հայաստանի Հանրապետության եւ ԱՄՆ-ի միջեւ երկկողմանի պայմանագրի բացակայության պատճառով հնարավոր չէր իրականացնել հետախուզվողի արտահանձնումը:

2007 թ. Վահան Սահակյանը կրկին հայտնաբերվեց եւ ձերբակալվեց Միացյալ Նահանգներում, սակայն հետախուզում հայտարարած երկրին արտահանձնումը դարձյալ նույն՝ երկկողմանի պայմանագիր չլինելու պատճառաբանությամբ տեղի չունեցավ: Բայց միջպետական համագործակցության ամրապնդումն ու ընդլայնումն այդ հնարավորությունը շուտով ընձեռելու էին:

Իսկ մինչ այդ, ամերիկաբնակ հայ հանցագործը խախտեց օրենքը նաեւ ԱՄՆ-ում եւ շորթման կասկածանքով ձերբակալվեց:

Ամերիկյան արդարադատությունը նրան դատապարտեց ազատազրկման: Սա Վահան Սահակյանի համար ճակատագրական եղավ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների իրավապահ մարմինները, հայ ոստիկանների հետեւողական աշխատանքի շնորհիվ, որոշում կայացրին Վահան Սահակյանին փոխանցել հայկական կողմին:

Հանցագործություն կատարելուց քսանմեկ տարի անց Վահան Սահակյանը տեղափոխվեց Հայաստան. առանձնապես ծանր հանցագործության բացահայտումը մոտենում էր տրամաբանական ավարտին:

Քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Գողություն մեքենայից

Մայիսի 18-ի առավոտյան օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Արարատի բաժին հաղորդում ստացվեց. կոտրել էին Արարատ քաղաքի շենքերից մեկի բակում կայանված «ՎԱԶ-2107» մակնիշի մեքենայի ապակին եւ գողություն արել:

Օպերատիվ խումբը դեպքի վայր մեկնեց: Ըստ տուժողի՝ գողությունը մայիսի 17-ի ժամը 22-ից մինչ հաջորդ օրն առավոտյան 9-ին էր կատարվել: Դափշտակել էին մեքենայի մարտկոցը, ձայնարկիչն ու մոնիթորը:

Գողությունը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ հետաքննություն իրականացնող մարմինը ձեռնարկեց օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները: Դնկողության տակ վերցվեցին նաեւ քաղաքի այն վաճառակետերը, որտեղ հնարավոր էր վաճառել գողոնը:

Օպերատիվ հարցումների արդյունքում ձեռք բերված տվյալների համաձայն՝ գողություն անողը մայրաքաղաքից էր՝ Աջափնյակ թաղամասի 30-ամյա մի բնակիչ: Պարզվեց նաեւ, որ նա գողությունն արել էր երկու ընկերների հետ:

Մայիսի 24-ին կասկածյալը բերման ենթարկվեց ոստիկանության Արարատի բաժին, որտեղ խոստովանական ցուցմունք տվեց:

Կատարվում է քննություն:

Բացահայտվել է ապօրինի թմրաշրջանառության շղթա

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ Մալաթիայի բաժնի քրեական հետախույզների համատեղ միջոցառմամբ, թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով, Սեբաստիայի փողոցից ոստիկանության Մալաթիայի բաժին բերման ենթարկեցին 48 եւ 39-ամյա երկու տղամարդու: Անձնական խուզարկությամբ նրանցից մեկի մոտ հայտնաբերվեց փայլաթիթեղի վեց փաթեթ՝ դեղահաբի բեկորներով: Ըստ բերման ենթարկվածի հայտարարության՝ հայտնաբերվածը սուբուտեքսի հաբեր էին:

Փաստի առթիվ հարուցվեց քրեական գործ: Քրեական հետախույզների հետեւողական աշխատանքի արդյունքում բացա-

հայտվեց ապօրինի թմրաշրջանառության շղթան:

Կարճ ժամանակում պարզվեց այն անձանց ինքնությունը, որոնցից ձեռք էր բերվել թմրամիջոցը: Երեւանի ոստիկանության եւ Մալաթիայի բաժնի քրեական հետախույզները համատեղ միջոցառման արդյունքում հայտնաբերեցին եւ, թմրամիջոց պահելու, օգտագործելու կասկածանքով, բաժին բերման ենթարկեցին նրանց:

Դարավարեւմտյան թաղամասում ապրող 38-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց ֆենադիազեպամ հոգեներգործուն դեղամիջոցի հաբ: Դարուցված քրեական գործի շրջանակում խուզարկվեց նաեւ նրա բնակարանը: Դայտնաբերվեցին 150-ից ավելի հոգեներգործուն հաբեր:

Նախաքննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Ռնվեց գողոնով հանդերձ

Ոստիկանության հորդորներին հակառակ՝ մեր քաղաքացիները շարունակում են եղանակային պայմաններից ելնելով՝ փան դռներն ու պատուհանները բաց թողնել, ինչից էլ հանցամիտներն օգտվում են:

Ապրիլի 23-ի երեկոյան Վանաձորում ոստիկանության ՊՊԾ դասակի ծառայողները շրջայցի ժամանակ տեղեկություն ստացան, որ Աղայան փողոցի շենքերից մեկում գողություն է կատարվում: Ոստիկանները շտապեցին նշված հասցե եւ շենքի շքամուտքից կասկածյալին բերման ենթարկեցին ոստիկանության Բազումի բաժին:

Պարզվեց, որ Գուգարք գյուղի 44-ամյա բնակիչը, օգտվելով շենքի բնակարաններից մեկի դուռը բաց լինելու հանգամանքից, մտել էր փուն, սակայն փանտիրուհուն տեսնելով՝ նախասրահից հետ էր դարձել: Դոպեներ անց բաց դռնով մեկ այլ բնակարան էր մտել եւ նախասրահից հագուստ գողացել: Բայց շենքից դուրս գալիս ոստիկանները բռնել էին:

Փաստի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Ապօրինի ծառահատում



Ապօրինի ծառահատումը, որքան էլ հաջողվի գործն աննկատ գլուխ բերել, մի օր կբացահայտվի, ինչպես բացահայտվեցին Դիլիջանում եւ համայնքի բնակավայրերից մեկում բնակվող երեք տղամարդիկ:

Անտառին պատճառված վնասի մասին պատկերացնելու համար նշենք, որ իրար միանգամայն անծանոթ ու հատուկ պահպանվող տարածքի տարբեր տեղամասերում գործած տղամարդկանց հանցավոր գործունեության հետեւանքով Դիլիջանի շրջակա անտառներից ապօրինի հատվել են 11 բոխի, 1 կաղնի, 2 թխկի, 1 հացենի եւ 3 սոճի: Բոլոր ծառերը կանգուն, թաց ծառեր էին, որոնց պատճառվել էր մինչեւ աճի դադարեցման աստիճանի վնաս: Իսկ պետությանը պատճառված վնասն արդեն դրամական արտահայտությամբ է չափվում, որը մի դեպքում կազմել էր 692 հազար դրամ, երկրորդ դեպքում՝ 982 հազար դրամ եւ երրորդ դեպքում՝ 348 հազար դրամ:

Բնությանը հասցված վնասն, իհարկե, անչափելի է ու ինչ պատիժ էլ սահմանվի, չի փոխհատուցի նրանց արարքի հետեւանքը: Տվյալ դեպքում գերակայող մտայնությունն այն է, թե անշունչ ծառ է, էլի՛, արմատները եթե չմահանան, ապա ծիլ ու ճյուղ կդառնա, տարիներ անց էլ՝ ծառ: Մինչդեռ ծառը շնչող օրգանիզմ է, էկոհամակարգի ապրող օրգանիզմի մաս: Ուրեմն կատարածը սովորական ծառասպանություն է, ինչը գուցե ոչ այնքան խիստ է պատժվում, որքան մարդուն կյանքից զրկելը, բայց պատժվում է, ու կպատժվեն նաեւ երեք ծառահատները:

Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Բնակարանային» ծրագրի տապալումը

Մայիսի 10-ին օպերատիվ խմբի ուղեկցությամբ Դայաստան վերադարձավ խարդախության եւ փաստաթղթեր կեղծելու մեղադրանքով 2014 թվականից հետախուզման մեջ գտնվող Մանուկ Մկրտչյանը: Դետախուզվողի հայտնաբերումը ոչ միայն Դայաստանի Դանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների սերտ համագործակցության հերթական վկայությունն էր, այլեւ այն ճշմարտության հաստատումը, որ կատարած հանցանքի համար անպատժելիությունը ժամանակավոր երեւույթ է: Իրավապահ մարմիններն իրենց ամենօրյա գործառույթներով դա են ապացուցում:

«Բնակարանային ծրագիրը» կյանքի կոչելուց առաջ Մանուկ Մկրտչյանը լուրջ նախապատրաստություն էր անցել: Մինչ խարդախության բուն գործընթացին անցնելը նախ կեղծիք էր կատարել, պատահաբար իր ձեռքում հայտնված մի քաղաքացու անձնագիր էր կեղծել: Անձնագրատիրոջ եւ իր ծննդյան թվերը համապատասխանում էին, նրա լուսանկարն էլ փոխարինել էր իրենով, եւ իր Մանուկ Մկրտչյանի անունազգանունով ու Պարգեւ Սերոբյանի տվյալներով անձնագիրը պատրաստ էր հանցավոր նպատակներն ի գործ դնելու:

Մանուկ Մկրտչյանը սկսնակ խարդախ չէր. նախկինում խարդախության համար երկու անգամ դատապարտվել էր: Նրա հաշվին յոթ-ութ տուժածներ կային: Վերջին դատվածությունից տասնհինգ տարի անց խաբեությամբ գումար ձեռք գցելու միտքը նորից գլուխ էր բարձրացրել:

Ուրիշի անունով անձնագիր ունենալուց հետո Մանուկ Մկրտչյանը երեսուն հազար դոլարով բնակարան գնեց Շերամի փողոցի շենքերից մեկում: Նպատակն ի սկզբանե պարզ էր. բնակարանը հետո վաճառելու էր մի քանի հոգու՝ երեսուն հազար դոլարի փոխարեն վաստակելով մի քանի անգամ ավելի: Ինչքան հասցներ վաճառել, այնքան «շահույթը» մեծ կլիներ:

Բնակարանը նորոգեց, բարեկարգեց եւ անշարժ գույքի գործակալություններում հայտարարություն տվեց ու սպասեց առաջին զոհի հայտնվելուն:

Խարդախի ծուղակում առաջին հայտնվածները մայր ու դուստր էին: Նրանք քաղաքի ծայրամասում մեկսենյականոց բնակարան էին փնտրում, երբ անշարժ գույքի գործակալության աշխատակիցը հրամցրեց Շերամի փողոցի բնակարանը: Գործակալի ուղեկցությամբ էլ եղան բնակարանում, հավանեցին ու գնելու համաձայնություն տվեցին:

Բնակարանատիրոջ հետ հանդիպեցին նույն օրը: Պարգեւ Սերոբյան ներկայացած Մանուկ Մկրտչյանի հետ պայմանավորվեցին առուվաճառքի գործարքը վավերացնելու համար հանդիպել առավոտյան՝ նոտարական գրասենյակում:

Առուվաճառքի պայմանագիրն առանց խոչընդոտների կնքելուց հետո Պարգեւ-Մանուկն անցավ «բնակարանային օպերացիայի» բուն փուլին: Խնդրեց բնակարանն իր տնօրինությանը թողնել երկու շաբաթ: Բնակարանի նոր տերերն ընդառաջեցին նախկին տիրոջ խնդրանքին:

Երեսուն հազար դոլարը գրպանում՝ Մանուկ Մկրտչյանը սկսեց նոր գնորդի փնտրտուքը:

Երկրորդ գնորդը նույնպես շուտ հայտնվեց Մանուկ Մկրտչյանի ծուղակում: Գնացին նոտարական գրասենյակ եւ վավերացրին բնակարանի նոր տեր ունենալու փաստը: Մանուկ Մկրտչյանը փողը գրպանը դրեց եւ նույն խնդրանքով դիմեց նաեւ այս խաբվածին՝ երկու շաբաթով բնակարանը թողնել իր տնօրինությանը:

Երրորդ «բնակարանատիրոջ» հայտնությունը, սակայն, ճակատագրական եղավ:

Առուվաճառքի գործարքը կնքելուց եւ նոտարի ներկայությամբ երեսուն հազար դոլարը Մանուկ Մկրտչյանին տալուց մի քանի օր անց քաղաքացին գնաց կադաստր՝ իր անվամբ սեփականության վկայական ստանալու եւ անակնկալի եկավ՝ գործարքը կատարվել էր կեղծ փաստաթղթերով...

Մինչ մյուս խաբվածները սպասում էին խոստացած ժամկետի ավարտին, որ տեղափոխվեն նոր բնակարան, անսպասելի հրավեր ստացան ոստիկանությունից:

Մանուկ Մկրտչյանը գիտեր, որ խարդախությունը շուտ-ուշ՝ ջրի երես էր ելնելու: Ինքը պարզապես պետք է հասցներ այդ ընթացքում անհետանալ: Անհետացավ Ռուսաստանի Դաշնության Խաբարովսկ քաղաքում: Բայց՝ հինգ տարի ժամկետով:

Քրեական օրենսգրքի 178 (խարդախությունը) եւ 325 (փաստաթղթեր կեղծելը) հոդվածների հատկանիշներով հարուցված քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Գողանալը՝ կենսակերպ

Երբ Վահան Խաչատրյանը երկու տասնյակից ավելի գողությունների համար 2014-ին հայտնաբերվեց ու կալանավորվեց, դեռ անչափահաս էր: Այդ հանգամանքն էր հաշվի առնվել մեղմ պատժաչափի ու նաեւ՝ պայմանական-վաղաժամկետ ազատվելու համար: Դաջորդ գողությունների ժամանակ արդեն հատել էր չափահասության շեմը՝ «զրկելով» իրեն անչափահասության «պլյուսներից»: Երեքուկես տարի ժամկետով ազատազրկվեց, իսկ մեկուկես տարի անց համաներմամբ ազատվեց: Ու քանի որ գողությունը կենսակերպ է, վերստին հայտնվեց քրեական պատասխանատվության ենթարկվելու փաստի առաջ:

Սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ընտանիքի՝ մոր ու եղբոր հետ ապրում են երկրաշարժից «ժառանգություն» մնացած վագոն-տնակում: Դայրն ինչ-որ տեղ ռուսաստաններում է. տարիներ առաջ մեկնել էր արտագնա աշխատանքի, որ քիչ թե շատ թեթեւացներ հոգսի տակ կքած ընտանիքի բեռը: Գնաց ու կորավ: Տեսնողներ եղել էին ու լուր հասցրել Վահանի մորը, թե՝ «Մարդդ մի տարիքով ռուս կնոջ մոտ է ապրում»: Կինը հասկացել էր, որ ամուսինը ոչ միայն վերադարձողը չի, այլեւ «քոռ ու փուչ մի երկու կոպեկ» էլ չի ուղարկելու: Դավաքարարի աշխատանք էր գտել ու հույսը դրել «բոյ քաշող» որդիների, հատկապես ավագի՝ Վահանի վրա: Այս ապերախտը, սակայն, հոգսաշատ մոր բեռն էր միայն ավելացրել:

Ասել, թե Վահանը այսուայնտեղից գողանալով՝ իր ձեւով ընտանիքի սոցիալական խնդիրն էր լուծում, անհեթեթություն է: Պարզապես իր անձնական խնդիրները լուծելու հեշտ ու անօրեն ճանապարհ էր ընտրել, որի վերջը, բնականաբար, անազատությունն էր, թեեւ ազատության գինն այնքան էլ չի պատկերացնում ու գնահատում, այլապես ընձեռված հնարավորություններն ի վնաս իրեն չէր օգտագործի:

Նոյեմբերին կալանավայրից ազատվելուց երեք-չորս ամիս անց հին «արհեստին» անցավ:

«Ձեռագիրը» նույնն էր. բնակարաններ մուտք էր գործում օրը ցերեկով, պատուհանից: Այդպես, օրինակ, մի գյումրեցու տնից տարավ մեկ միլիոն դրամ արժողության ոսկյա զարդեր, մի քանի օր անց մեկ այլ բնակարանից գողացավ տեսախցիկ, օծանելիք եւ մոտ հիսուն հազարի մետաղադրամ: Դաջորդ երեք գողությունների ժամանակ էլ տարավ նվագարկիչ, ոսկյա շղթա, մատանիներ, բջջային հեռախոսներ, հարյուր հիսուն հազար դրամ, հարյուր դոլար:

Խտրականություն չէր դնում՝ որտեղից ինչ գողանա, միայն թե տանելիք լիներ: Գողոնը շուկայում կրկնակի էժան իրացնում ու փողը դեռ չծախսած՝ հաջորդ բնակարանի «պատուհանն էր թակում»:

Մայիսի 10-ին մի «շեղումով» գողություն արեց: Քաղաքի մի հյուրանոցի սենյակներից մեկից գողացավ նոթբուք, բջջային հեռախոս, ֆոտոխցիկ, ձայնագրիչ ու հազար դրամ:

Երբ քրեական հետախուզության աշխատակիցները օպերատիվ-հետախուզական միջոցառումներ էին ձեռնարկում գողությունները բացահայտելու ուղղությամբ, նկատեցին, որ նախկինում բացահայտված գողությունների «ձեռագիրն է»: Նաեւ այն գողություններինը, որոնց բացահայտմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ էին իրականացնում:

Իսկ կասկածյալն արդեն օպերատիվ տեսադաշտում էր:

Մայիսի 14-ին Վահան Խաչատրյանը, գողության կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանություն: Խոստովանեց առանց այլեւայլության, նաեւ մատնացույց արեց դեռեւս չիրացված գողոնը:

Փաստով հարուցված քրեական գործով նախաքննություն է կատարվում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Հունիսի 3-ին ոստիկանության ՔՀԳՎ ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզների հետ համատեղ, Երեւան քաղաքի Հանրապետության փողոցից բերման են ենթարկել 53-ամյա Սամվել Գ.-ին, որը 2008 թ. դեկտեմբերից հետախուզվում էր Լեհաստանի Հանրապետության Ինտերպոլի ԱԿԲ-ի կողմից՝ Լեհաստանի քրեական օրենսգրքի 270, 286, 294 հոդվածների մեղադրանքներով:

◆

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՔՀԲ ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, հունիսի 4-ին Աբեղյան-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանից ոստիկանության Երեւան քաղաքի վարչություն բերման են ենթարկել 74-ամյա Նուբար Ք.-ին, որը 2018 թ. հունվարից ոստիկանության Արտաշատի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 325 (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը) եւ 329 (պետական սահմանն ապօրինի հատելը) հոդվածների մեղադրանքով:

◆

Հունիսի 4-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել 53-ամյա Արամայիս Վ.-ն, որը հետախուզվում էր Լեհաստանի Հանրապետության Ինտերպոլի ԱԿԲ-ի կողմից Լեհաստանի քրեական օրենսգրքի 158 հոդվածի մեղադրանքով:

◆

Ոստիկանության Մուշի բաժնի ծառայողները հունիսի 4-ին Վայոց ձորի մարզի Արենի գյուղից բերման են ենթարկել 55-ամյա Մանվել Գ.-ին, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 137 հոդվածի (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Ախուրյանի բաժնի քրեական հետախույզների բացատրական աշխատանքների շնորհիվ հունիսի 4-ին ոստիկանության Ախուրյանի բաժին է ներկայացել 28-ամյա Հովհաննես Խ.-ն, որը 2015 թ. ապրիլից հետախուզվում է ՌԴ Սամարայի մարզի իրավապահների կողմից՝ ՌԴ քրեական օրենսգրքի 161 հոդվածի (կողոպուտը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Մուշի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հունիսի 4-ին Գյումրիի Գարեգին Առաջինի փողոցից բերման է ենթարկվել 37-ամյա Արտյոմ Պ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

◆

Հունիսի 5-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել ՌԴ 41-ամյա քաղաքացի Սերգեյ Չ.-ն, որը 2018 թ. հունիսից հետախուզվում էր ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի (մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ռ. - Կոր-սակով, սիմֆ. սյուիտ
Լերմոն-տով, դրա-մա / Մարզաձեւ
Թանկար-ժեք քար / ... ու աղեղ
Գավաթ
Իրավաբ. մարմին / Աբենացի քաղ. գործիչ
Կշռի հին միավոր / Ամերիկ. թենիսիստ
Իտալացի երգահան / «Իլիա-կան»
Ճնշման միավոր / Ռուս կինո-դերասան
Պա դե ... / Մրցավար
Բժշկ. հաստա-տություն
Ճապոն. ֆիրմա
Ռուս ճար-տարապետ / Խորհրդա-րան, Ուկր.
... Քրոու
Մեծ լճե-րից ամե-նամեծը / Ուստիան
... Դիդրո / Երկիր, Ասիա
... Սարգս-յան
Որոմ, գաղձ / Ջրային տարածք
Կանաչե-ղեն
Համաստե-ղություն
Ժան Պոլ ... / Ներկատու բույս
Գդալ, պատա-ռաքաղ
Կալսող գործիք / Բոտսվա-նա
Ծերա-կույտ, հին Հռոմ / Ամիրա
Թերակղ-զի, Հու-նաստան / Բենի ...
Արեւել-յան հին ոսկեդ-րամ
Քաղաք, Իտալիա / Ջավա-հարլալ ...
Ռուս վի-րաբույժ / Ակադեմիա
Կերպար
Լեռնաշղ-թա, ՀՀ
Շուբերտ, սիմֆոնիա / Պաբլո ...
Կարճր վառելան-յութ
Երկնային մարմնի լուսազր-կում
Ձեռքի բացվածք
Օստապ ... / ... Գու-տենբերգ
Ֆրանս. մաթեմա-տիկոս
Սխտոր / Սկոպիե
Քաղաք, Թաիլանդ
Հարյուր-ամյակ / Մարգարե
... Գոլսու-որդի / Ճապոնա-կան գիր
Հայ կին գրող
Պերճան-քի առար-կա
Վախճան
Ջյութ / «Վերջին ...ը»
Պահարա-նի մաս
Ողկույզ / Փայտա-շերտ
Եղջյուր / Բուսահող
Ծաղկե շրջանակ / Արեւի ատված
Թերա-կղզի, Կենտր. Ամերիկա
Մետաքս
... Գափրին-դաշվիլի
Ֆրանս. փիլ. եւ բանաստ. / Սրբազան եզ
Լարավոր նվագա-րան
Տոնական սեղանի կառավա-րիչ
Մեծ կապոց
Հայոց տոմարի ամիս
Ժողո-վուրդ, ՀԱՀ
Տոնավա-ճառ
Հայր Դյումա, վեպ
Բրդյա գործ-վածք
Պարա-քայլ
... արահետ
Ռուս նկարիչ
Մեգրե / Հարփեր ...
Թուման, շահի
Կամայի վտակ
Արագաց-ման միա-վոր
Արեւա-դարձ. բույս / Քահանա
... դե ժանեյրո
Հայկ. տառ / Մորեղ-բայր



Ուշադրություն

Հարգելի քաղաքացինե՛ր

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Աստղագուշակ

Խոյ - Ձեզ սպասում են վառ տպավորություններ եւ կարեւոր ձեռքբերումներ:

Ցուլ - Անձնական հարաբերություններում հավանական են դրական փոփոխություններ, ծանոթություններ:

Երկվորյակ - Հակված եք չափազանցելու իրադարձությունների կարեւորությունը, մանուքներին մեծ նշանակություն եք տալիս եւ անտեղի անհանգստանում:

Խեցգետին - Հնարավորինս խուսափեք հապճեպ որոշումներ կայացնելուց: Այն, ինչ պարզ է թվում, իրականում կարող է բարդ լինել:

Առյուծ - Ձեռնպահ մնացեք ֆինանսական պարտավորություններ ստանձնելուց: Խուսափեք ապառիկ գնումներ կատարելուց:

Կույս - Հնարավոր է վատ նորություններ լսեք: Ընտանիքի անդամները ձեր ուշադրության կարիքն ունեն:

Կշեռք - Ստիպված կլինեք ուղղել նախկինում թույլ տված սխալները, հատուցել սեփական անփութության եւ անուշադրության համար:

Կարիճ - Առողջական խնդիրներ կունենաք, եթե տառապում եք սիրտանոթային հիվանդություններով:

Աղեղնավոր - Նոր հնարավորություններ կընձեռվեն, իսկ լավ լուրերը կուրախացնեն: Զգացմունքային դաշտը կկայունանա:

Այծեղջյուր - Հնարավոր է սեր առաջին հայացքից. ձեր զգացմունքները փոխադարձ կլինեն, իսկ հարաբարությունները հրաշալի զարգացում կունենան:

Ջրհոս - Սպասում են տհաճ անակնկալներ, նաեւ անհանգստություն, հուզմունք: Մի՛ հուսահատվեք. շուտով բացասական միտումների ազդեցությունը կնվազի:

Ձուկ - Առողջության հետ կապված լուրջ խնդիրներ կունենաք, եթե ամենայն պատասխանատվությամբ չմոտենաք խնդրին եւ անտեսեք այն:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1. b2-a3 h8:b2 2. a3:c1:g5:g1x

Խնդիր N2 1. c5-d6 e7:c5 2. c3-d4 e5:c3 3. b2:f2x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աբաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 06.06.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: